



28. ՄԱՐԴԱԳԵԼԻ ՀԵՋԻԱԹԸ

Կըլնի շիւնի մի մարդ, մի կնիկ: Սրանք էրկու տղա են ունենում: Մի անգամ էս մարդը էթում ա սարը բոխ քաղելու: Քաղում, պրծնում ա ու ետ գալի: Հետը մի պարկ կորեկի հաց ա ունենում, լավ խժոռում ա ու անցկացնում գլխին. մի դճից ուտում ա, մի դճից էթում իրա ճամփին: Ախար աչքերը կալանված ա, դադ չի տենում: Գնաց, գնաց, մի վախտ պարկը գլխից հանեց. տեհավ, որ մի մութը տեղ ա: Մնաց տեղն ու տեղը կանգնած: Մտիկ արեց, տեհավ, որ հեռու մի ճրագ ա վառվում ու դպա էն ճրագը գնաց: Մտավ տուն, տեհավ, որ մի պառավ կնիկ նստել ա տանը. սրա աչքերը քոռ էր, Պառավ կնիկը, որ էս տան տերն էր, մարդագել էր, սաքի թե մարգի միս էր ուտում:

Պառավը շատ ուրախացավ ու ասեց.— Բարև, որդի, իմ աչքի վրեն էկար, արի նստի, դաթի որդի շունեի, աստված ինձ որդի տվեց, սրանից դեն ինձ մոտ կաց ու քեզ հմար ապրի:

Մարդը ասեց, որ մի կնիկ ու էրկու տղա էլ ունի: Մարդագելը ասեց, որ էթա իրա սաղ օղլուշաղը բերի ըստեղ ու իրար հետ ապրեն: Մարդը վե կացավ ու գնաց բերեց իրա կնկանն ու էրկու տղերքանցը: Մարդագելի քեֆը բացվեց, շունքի մեկի տեղակ հիմի չորսին պիտի ուտի: Գնաց մի մենձ քար դռանը դեմ տվեց ու սկսեց մին-մին մորթել: Առաջ մարգին վե քցեց ու մորթեց, հետո-

աղերքանցից մեկին: Հորր ու որդուն իստկեց, աղ դրեց, որ չավաշ-
յավաշ ուտի: Չունքի բեզարել էր, դնաց դուս, որ քիչ դոնջանա,
հետո դա մորն ու տղին մորթի ու աղ դնի: Գնաց մարդագելը ու
ետևից քարը դրեց դռան վրա, որ դուս չգան: Համա մերն ու տղն
կարացին քարը դնն քցի ու դուս էկան գնացին: Էս մարդագելի
բակում մի մենձ ցեխ կար, էս ցեխի կողքովը գնացին: Համա
մարդագելը ոնց որ էլավ՝ հոտն առավ ու ետննբրից ընկավ: շունքի
նա քոռ էր, ցխի մեջ խրվեց ու մնաց: Հետո մեր ու տղա գնացին
մարդկերանց իմաց տվին, էկան ինչքան սպանած մարդիք կար
էս մարդագելի տանը՝ հանեցին ու թաղեցին: Նրա տանը ինչ կտր-
չկար՝ էլ փող, ոսկի, էրծաթ հավաքեցին ու տարան:

